# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՃԱՄԲԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Ճամբարակ համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք.Ճամբարակ, (0265)22255, chambarak.gegharquniq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

14 ՄԱՅԻՍԻ 2025թվականի N 327-Ա

## ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԾԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածով, ՀՀ կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման հավելված 1-ի 9-րդ կետի դրույթներով, ՀՀ հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին կետի, «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 14 պրիմ հոդվածով և Ճամբարակ համայնքի 07.07.2022թ. հաստատված գլխավոր հատակագիծը և քաղաքացի Պարույր Եղիազարի Հովհաննիսյանի կողմից 12.05.2025թ. տրված Դ-129 դիմումը:

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Ճամբարակ համայնքի Ճամբարակ բնակավայրի վարչական սահմաններում գտնվող, քաղաքացի Պարույր Հովհաննիսյանին սեփականության իրավունքով պատկանող 05-002-0071-0107 կադաստրային ծածկագրով 0.29 հա հողամասը համապատասխանեցնել գլխավոր հատակագծին՝ բնակավայրի այլ նշանակության հողերից որպես բնակավայրի բնակելի կառուցապատման հողամասերի, ինչ շինության նպատակային նշանակությունը նախկին ջրի մղման կայանից փոխել որպես օժանդակ շինություն և կատարել պետական գրանցում:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

**Համայնքի ղեկավար՝** **ՎԱՀԳԵՆ ԱԴԱՄՅԱՆ**

2025 թ. մայիսի 14
ք. Ճամբարակ